

ՐԱԳ
ԾԽԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



JRAK
PARISH NEWS

MESSAGE OF FAITH



“Encourage the young men to be self-controlled. In every thing set them an example by doing what is good. In your teaching show integrity, seriousness and soundness of speech.” - Titus 2:6-8

The role of the father is more than a functional one in providing for his family. Fathers who are nurturing of their loved ones become examples of Christian living and important role models for children to imitate to have meaningful and purpose filled life.

Sunday 16 August

August every year, the Armenian Church Ladies Auxiliary hosts the St Mary’s Day luncheon to celebrate and remember the Assumption of the Holy Mother of God and this year was no exception.

It was a full house with 165 attendees who were entertained and enjoyed a feast truly fit for a queen. A big thank you goes to our dedicated church servants for preparing the feast and hosting the event.

Special thanks also to all our parishioners who generously supported the day’s event with their kind donations.



VOLUNTEERS NEEDED

The ACLA needs you. We welcome volunteers of all ages to come and join our friendly ladies who tirelessly serve our parishioners by serving coffee on Sundays.

If you or your friends would like to participate please contact Azniv Iskenderian on 9419 8056 for further information.

COMING UP

Friday 11 September

Celebrating the 30th Ordination Anniversary of Rev. Fr. Norayr Patanian

An event hosted by the Church Council.

Sunday 13 September

Feast of the Exaltation of the Holy Cross (*Khachveradz*)

The fifth of the major feast days of the Armenian Apostolic Church. Episcopal Divine Liturgy.

Sunday 20 September

3rd Anniversary Requiem for Archbishop Aghan Baliozian

A memorial coffee service (*hokesoorj*) will be held in the Edgarian hall following Badarak.

Tuesday 13 October

Armenian Genocide Centenary Ecumenical Service

Hosted by the Catholic Diocese of Broken Bay at St Dolours Catholic Church, Archer Street, Chatswood.

Sunday 22 November

Armenian Kermesse
Celebrating our Food, Culture and Community.

ARMENIAN VIRTUAL COLLEGE

Learn to speak Armenian Attend classes, communicate, professional help you

History At Your Fingertips Some media choice

Connect With Your Heritage AVC more the virtual

The mission of the Armenian Virtual College (AVC) is to provide learners around the world the opportunity to receive a full-fledged education in Armenian Studies, regardless of their age, country of residence, or knowledge level. The AVC offers:

- * Armenian Language
- * Armenian History
- * Armenian Culture
- * Chess

We are seeking the interest of our community in joining an AVC class facilitated by a trained tutor at the Church of Holy Resurrection. To register your interest in any of these subjects, contact Mihran Lepejian on 0478 127 708 or lepejian@gmail.com **by 31 September**

WISHING OUR CHURCH
PILGRIMS SAFE AND BLESSED
TRAVEL TO ARMENIA AS THEY
DEPART ON 16 SEPTEMBER

The Blessing of Holy Muron

His Holiness Karekin II, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, will preside over the Blessing of the Holy Muron on Sunday 27 September.

Holy Muron is made of olive oil and some 40 different types of flowers and sweet-smelling herbs. During the ceremony, some remnant oil from the previous blessing is mixed into the cauldron with the new muron, linking it with the ancient past of the Armenian Church.

On August 19, on the heels of an evening service in the Mother Cathedral, the distinctive silver cauldron used in the sanctification ceremony was filled with olive oil and positioned on the Altar of Descent, covered with an embroidered veil. Over 40 days – until the blessing ceremony – prayers are offered every evening in front of the cauldron. Eventually, the sanctified muron will be distributed to every Armenian diocese and hence every Armenian parish in the world.



Կիրակի 13 Մեպտեմբեր

Խաչվերաց: Տօն Վերացման Սրբոյ Խաչին

Խաչվերացը Հայ եկեղեցւոյ հինգ մեծ տօներէն՝ տաղաւարներէն վերջինն է, որ ունի տօնին նախորդող մէկ շաբթուան պահքն ու նաւակատիքը: Յաջորդ օրը՝ Երկուշաբթի, մեռելոց է, ինչպէս՝ բոլոր տաղաւարներու պարագային: Խաչվերացը հայ հաւատացեալին համար ամենէն շատ ժողովրդականութիւն ունեցող Խաչի տօնն է: Հայոց եկեղեցին զայն կը կատարէ Մեպտեմբեր 14-ի մօտիկ Կիրակին: Թափօրի խաչը նախօրօք զարդարուած կ'ըլլայ բուրմունսաւետ ռեհանի փունջերով: Կ'երգուէին օրուան յատուկ խորհուրդը բացայայտող ու փառաբանող հոգեզմայլ շարականներ:

Ուրեմն, առաջին հերթին այս նուիրական տօնին մէջ խտացած է հաւատացեալ ժողովուրդին ունեցած հաւատքին զօրութիւնը. Խաչի վերացման, այսինքն բարձրացման, պանծացման միջոցով նաեւ զոհութիւն եւ երախտագիտութիւն կը յայտնէ Աստուծոյ Քրիստոսի խաչելութեամբ իրագործուած փրկագործութեան խորհուրդի համար:

604-605 Տարիներուն՝ Փոկաս կայսեր բռնապետութեան օրերուն, պարսից արքայից արքայ Խոսրով Բ. Փարվեզի բանակները դիրութեամբ ներխուժեցին Բիզանդական կայսրութեան սահմաններէն ներս:

610-611 Եգիպտոսի զօրավար Հերակլէս կամ Հերակլ գահընկէց ընելով բռնապետ Փոկաս կայսրը՝ տիրացաւ կայսերական գահին: Հերակլի մահին կ'ըսուի, որ հայկական ծագում ուներ եւ կու գար Կասպաղովկոյ շրջանէն:

614 Թուին պարսկական բանակները կը հասնին Երուսաղէմի պարիսպներուն առջեւ: Պարսիկները կը յաջողին գրաւել Սուրբ Քաղաքը: Գերի տարուածներուն մէջ էին Երուսաղէմի հայոց Զաքարիա պատրիարքն ու բազմաթիւ հոգեւորականներ: Քրիստոսի խաչին պահապանը եւս գերիներուն մէջ ըլլալով, կը տարուի դէպի Պարսկաստան:

12 Դեկտեմբեր 627-ին բիզանդական եւ հայկական զօրքերը վերջնականապէս պարտութեան կը մատնեն պարսիկները: Հերակլ կը բանակցի Խոսրովի գլխաւոր զօրավարներէն՝ Շահրվարազ Խոռեամի հետ, խաղաղութեան դաշինքը կը ստորագրուի 628-ին, նոյն տարին նաեւ Խաչը կը վերադարձուի քրիստոնէաներուն:


Հերակլ անձամբ կը գլխաւորէ պատուոյ զօրագունդը նախ Պարսկաստանէն՝ Հայաստանի վրայով Կ. Պոլիս կը բերէ զայն, ուր կ'արժանանայ ազգային հերոսի եւ Եկեղեցւոյ սուրբի բացառիկ պատիւներուն: Մեծ է հաւատացեալ ժողովուրդին ցնծութիւնը ի տես Քրիստոսի խաչափայտին յաղթական տուն վերադարձին: Այնուհետեւ, դարձեալ Հերակլ անձամբ կ'առաջնորդէ Ս. Խաչը Կ. Պոլսէն մինչեւ Երուսաղէմ եւ զայն կը զետեղէ Ս. Յարութեան տաճարին մէջ:

Մեր եկեղեցւոյ զաւակներուն համար Խաչվերացը կրկնակի պատճառներով սիրելի տօն մըն է: Առաջին հերթին, խաչին գերեզարձի ուրախ առիթով, որուն մէջ հայկական գունդեր ալ իրենց նպաստը բերած էին. երկրորդ, խաչին՝ Տիգրանէն Կարին, Հայաստանի վրայով Կ. Պոլիս փոխադրուած ըլլալուն համար:

Կարելի է պատկերացնել, թէ ինչպիսի՛ ցնծութեամբ հայ ժողովուրդի զաւակները կը դիմաւորէին պարսիկներու ձեռքէն ազատագրուած խաչին Հայաստանի քաղաքներէն ու գիւղերէն անցքը: Ինչպիսի՛ հանդիսաւոր եկեղեցական թափօրներով կ'ընդառաջէին անոր. սաղմոսներով ու շարականներով, բուրվամներով, ծնծղաներով, զանգակներով, խունկով ու մումով կ'ընկերակցէին անոր մինչեւ յաջորդ կայանը: Քրիստոսի իսկական խաչափայտի Հայաստանի ճամբով տուն դարձը թէ՛ Խաչի վերացման, բարձրացման, պանծացման եւ փառաբանութեան առիթ էր, եւ թէ՛ օրհնութիւն ու զօրութիւն էր այդ Խաչի պաշտպանութեան համար բազում անգամներ խաչ բարձրացած հայ հաւատացեալներուն համար:

«Խաչ Քո եղիցի մեզ ապաւեն Տէր Յիսուս... Աղաչեսցուք զամենակալն Աստուած, զի պահպանեսցէ զժողովուրդս իւր ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչին իւրով ի խաղաղութեան...»:

«Սուրբ Խաչիս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կ'եցո՛ւ եւ ողորմեա՛ »:



Կիրակի 16 Օգոստոս

Սուրբ Աստուածածինի տարեկան ճաշկերոյթ՝ Էտկարեան սրահէն ներս: Կազմակերպուած Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի կողմէ, 165 ներկաներ վայելեցին Սուրբ Աստուածածինի խորհուրդը եւ համեղ ճաշը:

Երկուշաբթի 17 Օգոստոս

Փրոֆ Աստղիկ Պալայան հանդիպեցաւ՝ հայկական բոլոր վարժարաններու ուսուցիչներուն եւ տնօրէններուն հետ, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ՝ Էտկարեան սրահէն ներս: Ներկայ էին նաեւ, Գերաշնորհ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանը, Արժանապատիւ Տէր Աւետիս Համբարձումեանը եւ եկեղեցւոյ վարչութեան անդամներ: Սոյն հանդիպման նպատակն էր «Կլոր Սեղան»ի շուրջ նստիլ եւ քննարկել Հայկական Վարժարաններէն ներս՝ Հայերէն Լեզուի դաստիարակման դժուարութիւնները եւ զանոնք յաղթահարելու միջոցները:



Ուրբաթ 11 Մեպտեմբեր

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ՝ Էտկարեան սրահէն ներս, Տէր Նորայր Բաթանեանի երեսունամեայ հոգեւոր ծառայութեան գնահատական երեկոյ:

Կիրակի 20 Մեպտեմբեր

Հոգեհանգիստ Երջանկայիշատակ Արքեպիսկոպոս Աղան Պալիոզեանի:

Կիրակի 22 Նոյեմբեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԵՐՄԷՍ

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Պատարագէն ետք, տօնախմբութիւն հայկական մշակոյթի, արուեստի եւ ուսելիքներու: